«Իրաւունք», հասարակական-քաղաքական եռօրյա թերթ: Լույս է տեսել Վառնայում (Բուլղարիա), 1896-1911 թթ.:

«Լրագիր», օրաթերթ, լույս է տեսել Կ. Պոլսում, 1875-1880 թթ.:

«Լուսաբեր», ազգային, քաղաքական, տնտեսական և գրական լրագիր: Լույս է տեսել Կահիրեում, 1901-1908 թթ.:

«Ծաղիկ», գրական-բանասիրական, մանկավարժական, տնտեսական, գիտական և քաղաքական պարբերական: Հրատարակվել է Կ. Պոլսում, 1886-1908 թթ.:

«Կաւռօշ», քաղաքական-կենցաղային պատկերազարդ երգիծական օրաթերթ, այնուհետև՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1908-1926 թթ. և Փարիզում, 1926-1936 թթ.:

«Կիկօ», երգիծական շաբաթաթերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1913 թ.:

«Համալսարան», գիտական և գրական ամսաթերթ: Լույս է տեսել Փարիզում 1899-1902 թթ.:

«Հայ գրականութիւն», գրական-գեղարվեստական, գիտական ամսագիր: Լույս է տեսել Զմյուռնիայում, 1911-1914 թթ.:

«Հայրենիք», օրաթերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում, ընդհատումներով, 1870-1896 թթ.: 1891-1896 թթ. հրատարակվել է Արփիար Արփիարյանի խմբագրապետությամբ:

«Հայրենիք», գրական, հասարակակն, քաղաքականա շաբաթաթերթ, ապա օրաթերթ: Լույս է տեսնում Բոստոնում (ԱՄՆ) 1899 թ-ից:

«Հոսանք», շաբաթաթերթ, հրատարակվել է Կահիրեում, 1912 թվականին:

«Հորիզոն», շաբաթաթերթ: Լույս է տեսել Ալեքսանդրիայում, ապա Կահիրեում, 1904-1905 թթ.:

«Հորիզոն», հասարակական, քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ: Լույս է տեսել Թիֆլիսում, 1909-1918 թթ.: